

հոգիներուն և կենսքերուն սիրաբույր այդ խաղաղութեան մէջ թաղուած՝ իրենց հանգիստը ու երանութիւնը օրօրին, մեռած թէ ապրող մեր բոլոր հայրերը, եղբայրներն ու քոյրերը, և յաւիտենական իր հանգիստն ու երանութիւնը օրօրէ՛ մանաւանդ ողբացեալ մեր Սրբազան Հայրապետը, և

այս՝ յուրախութիւն երկնի և երկրի, ի շինութիւն Ազգի և Հայրենիքի, ի պայծառութիւն վանուց և եկեղեցւոյ, ի փառաւորութիւն մանաւանդ մեր Ս. Աթոռոյն, և ի փառս Ս. Երրորդութեան. Ամէն:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ՔԶՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՀԻՆ ԶԱՆԳԱԿ

ՎԱՆՔԻ ՏՐՏՈՒՄ ՕՐԵՐՈՒՆ

Մայրավանքի հին զանգակ, կսոր կսոր կը փրթիւս...
Խորունկ՝ բեկումն է, իջնող՝ ծանր ու մութ, հոգիիս.
Ձայնըդ թայնա՛ն է հեռու, անհրաւէր, վիրաւոր,
Նըլաղուն կանչ մը ինչպէս օրերուն դէմ մեր հասնող...

Մայրավանքի զանգա՛կ հին, հոգիիս մէջ ինչ փառքեր
Դուն երգեցիր. ինչ հրնուա՛նք, հրպարսութիւնն իմ ցեղին...
Հոն, ժողովուրդ մը լըման՝ ծնծղայ-ծնծղայ, կը հընչէ՛ր,
Կամարներով, ջահերով, հասակներով արփային...:

Հիմա, գիտե՛ս, հի՛ն զանգակ՝ անարձագանգ հրաւէր,
Ձայնէդ ամէն մէկ կաթիլ՝ սրտութիւններ փակելէն
Մօտիկ, հեռու անցեալիդ բաւիղներուն ընդմէջէն,
Կսոր կսոր կը փրթի՛, հոգիներուն պէս աւեր...:

Ըսէ՛, ըսէ՛, դարձընէ՛ս պիտի նորէն ինծի դուն,
Հին ֆաղցրութիւնն իմ արտին..., կարօս այնքա՛ն որ ունի:
Ու մանաւանդ դարձընէ՛ս պիտի հրպարս իմ հոգւոյն,
Ինչ որ երէկն էր՝ շրթնէ՛ր, յաւերժագէտ, կորովի...:

Մայրավանքի զանգա՛կ հին, գիտնա՛ս ինչպէ՛ս կը կոսսայ
Սիրքս՝ ձայնիդ դէմ, հիմա...:

10 Օգոստոս 1944

Թ. Ա. Մ.